

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԳԼՈՒԽ, ՍԻՐՏ ԵՎ ԱԶՔ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ
ԶԱՅՐՈՒՅԹ, ԴԺԳՈՂՈՒԹՅՈՒՆ

ԵՎ ՀԱՆԴԻՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ
ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դեռ վաղնջական ժամանակներից սիրտը գիտակցվել է որպես զգացմունքների կենտրոն, իսկ ինչո՞ւ: Չէ՞ որ զգացմունքներն իրականում կենտրոնացած են ուղեղում, սակայն երբ մենք ուժեղ հույզեր ենք ապրում՝ վախ, զայրույթ, վիշտ, սեր և այլն, աղբյուրները հորդելով արյան մեջ, բարձրացնում է արյան ճնշումը և արագացնում սրտի աշխատանքը: Ուստի և սիրտը մարդկանց համար միշտ էլ եղել է մտքի ու զգացմունքի կենտրոն, այլ կերպ ասած՝ սիրտը վերահսկում է բոլոր զգացմունքները, այն զգացմունքները, որ արտացոլվում են մարդու աչքերում: Չէ՞ որ նայելով մարդու աչքերին հնարավոր է հասկանալ, թե ինչ է կատարվում նրա հոգում, արդյոք ուրախ է, թե՞ տխուր, զայրացած է, ամաչո՞ւմ է, հույսով լի՞ է, թե՞ հուսահատ, սիրո՞ւմ է, ատո՞ւմ, թե՞ անտարբեր, վախեցա՞ծ է, արդյոք մի ցավ ու վիշտ ունի՞ և այլն: Աչքերն են մատնում՝ թե մարդը ճշմարիտն է ասում, թե՞ ստում է, անկե՞ղծ է, թե՞ կեղծավոր և այլն:

Գլուխ, սիրտ, աչք բաղադրիչներով զգացմունքներ արտահայտող դարձվածային միավորները ձևավորված են հիմնականում փոխանունության ռճական հնարով: Դրանց շարքում տեղ են գտել թե՛ հայերեն, թե՛ ռուսերեն և թե՛ անգլերեն դարձվածքներ (կարծում ենք, որ նման դարձվածքների կարող ենք հանդիպել շատ այլ լեզուներում): Սա բնական է, միթե՞ բոլոր այս ժողովուրդներն էլ չէին կարող արտաբերել դիտարկումների հիման վրա դատողություններ անել, վերացարկումներ կատարել, հասկանալ մարդու ներաշխարհը, նրա հույզերն ու ապրումները:

Սույն հոդվածի նպատակը *գլուխ, սիրտ* և *աչք* բաղադրիչներով դարձվածքների իմաստային այն դաշտերի վերլուծությունն ու զուգադրումն է, որ արտահայտում են «զայրույթ, հանդիմանություն, դժգոհություն» իմաստները:

Թեև այս դաշտում տեղ են գտել և հայերեն և ռուսերեն, և անգլերեն դարձվածային միավորներ, սակայն հարկ ենք համարում նշելու, որ հայերենի դաշտերը բոլոր դեպքերում ամենաձավալունն ու ամենաբազմազանն են իրենց իմաստային, կառուցվածքային, ռճական առանձնահատկություններով: Դաշտերում ընդգրկված կապակցությունները դասվում են դարձվածային սերտաճումների շարքին՝ անօտարելի և անփոփոխելի բաղադրիչներով: Դարձվածքների գլխավոր անդամը իմաստային առումով *գլուխ, սիրտ* և *աչք* բաղադրիչներն են:

Այժմ բերենք դաշտում ընդգրկված դարձվածքները:

ԳԼԽԻՆ (ՄԻ) ՕՅԻՆ ԴՆԵԼ (խսկց.) – *խիստ նախատել: Մեկ-մեկ են տեսակ օյիններ է դնում գլխիս, որ էլ ասել չեմ կարող* (Ս.Խ., 460):

Մեկի գլխին լափ թափել/գլուխն ածել (բրբ.) – Մեկին սաստիկ նախատել, անպատվել: Աշխրբի լափը գլուխտ ածավ (ԳՍ Պեպո, 282):

Գլխին շան լափ ածել/թափել նույնն է՝ Գլխին լափ թափել (խսկց.) – խիստ նախատել, հանդիմանել: Հարցնում է՞րք, գրեթե ճշաց Միսակյանը, – չլսեցի՞ր, թե ինչպիսի լափ թափեցին գլխիս (Ս.Խ., 230): Նա երկար խոսեց էսպես, շան լափը թափեց գլխիս (Ձ, I, 177):

Գլխին բար/բարակարկուտ/ջրաղաց աղալ – խիստ հանդիմանել, վրան գայրանալ: Գլուխիս միշտ բար կաղա կեսարս, – ըսած էր հարս Աղավնին օր մը հարևան տիկիներին (Թոթ., I, 260):

Գլխովդ/գլխներիդ դիպչի (պետք չէ նշանակությամբ) – Պետք չի, ինձ հարկավոր չի՞, ես քեզանից ողորմություն չեմ ուզում, – մեջ ընկավ ծերունին, – գլխովդ դիպչի քո արած լավությունը (Պռ., 283):

Գլուխը բարը (խսկց.) – «Գլուխը բարովը տա, իմ պետքն էլ չէ»: Բարը տերտերանց գլխին էլ, նրանց ծառերի էլ (Ձ., I, 17): Ես աշխատում էի մի կերպով ընտանիքը ազատել, մնացածը, ասում էի, գլուխը բարը, թող տանեն (Բաֆ., IV, 29):

Գլխի փափախը բամին տանի (բրբ.) – մարդկային արժանապատվությունից զրկվես:

Գլխին անեծք թափել – խիստ հանդիմանել: Դու եկար մեր գլխին անեծքներ թափելու (Բաֆ., IV, 25):

Ուխտը գլխին խռով կենա (ասացվ.) – Ուխտածիդ չարժանանաս նշանակությամբ:

Բարկությունը/գայրույթը (մեկի) գլխին թափել – Չայրույթը մեկի գլխին թափել և հանգստանալ: Նա ուզում էր բարկությունը թափել իմ գլխին, բայց ես, ետ–ետ գնալով, ծլկվեցի կիսաբաց դռներով (Ձ., II, 95):

Գլխին շուռ տալ բարկությունը – Չայրույթը մեկի վրա թափել, խիստ բարկանալ, գայրանալ:

Գլխին (գլխուն) կրակ թափել – Մեկի վրա շատ բարկանալ, կատաղել:

Գլխին հուր ու կայծակ թափել նույնն է՝ Գլխին կրակ թափել:

Կրակը գլխին (գլխներին) թափել – Սաստիկ գայրանալ, կատաղել:

Գլխին կրակ վառել – Սաստիկ գայրանալ, մոլեգնել:

Կուժն ու կուլան գլխին կոտրել/ջարդել (խսկց.) – Ուրիշների փոխարեն գայրույթը մեկի վրա թափել, պատժել: Զո բանը բուրդ է, հեչան, ասում եմ, կուժն ու կուլեն քո գլխին պտի կոտրեն (Ձ, I, 180):

Գլխին թույն թափել – խիստ բարկանալ: Երևի թույնը թափում ես կնոջդ գլխին (Քառս, 188): Եվ երկուսն էլ իրենց սրտի թույնը թափում էին Անտոնինա Իվանովնայի գլխին, տեղի–անտեղի, բարձրածայն հայիոյելով նրան (Քառս, 259):

Գլխի որդը/որդերը շարժվել/շարժել (խսկց.) – 1. Սաստիկ գայրանալ, կատաղել, 2. Չայրացնել/կատաղեցնել:

Кровь бросилась в голову – Արյունը գլխին խփեց – խիստ գայրանալ, հուզվել: Случись же, что она взглянула на меня – Вся кровь бросилась ей в голову (Нет. Незв., 227):

Бросаться/броситься в голову (кому) – Մեկին զրգռել, բարկացնել: Эта

бесцеремонная, почти буйная веселость, эти небывалые сношения с незнакомыми людьми так и бросились в голову (Первая любовь, 40).

Намылить голову – *խիստ հանդիմանել, կշտամբել, հայիոյել մեկին: Я, впрочем, тогда—же намылил голову, чтобы в чужие дела не совались* (Идиот, 55).

Посыпать голову – *Գլխին թափվել (անեծքներ, հայիոյանքներ): Божел! Какие ругательства, какие угрозы посыплются на его голову* (Станц. смотр., 218).

Мыть голову (հնց.) – *խիստ հանդիմանել, հայիոյել:*

Call down curses (from Heaven) upon/sb's head (բառացի՝ երկնքից անեծք բերել գլխին) – *Աստծո անեծքը բերել մեկի գլխին:*

A hot head (բառացի՝ տաք գլուխ) – 1. *Տաք գլուխ, դյուրագրգիռ մարդ:* 2. *Բարկացկոտություն:*

Draw down anger/scorn, etc upon one's head (բառացի՝ զայրույթ/արհամարհանք իջեցնել գլխին) – *Առաջ բերել մեկի զայրույթը, ատելությունը:*

Like/as a bear with a sour head (բառացի՝ ինչպես թված գլխով արջը) – *Աստիկ զայրացած: As for that architect chap, he was as glum as a bear with a sour head...* (The Man of Property, 202):

Բերված դարձվածքներն ուսումնասիրելիս նկատում ենք, որ դրանք, ըստ իրենց կառուցվածքային տիպի, բայական են, բացառությամբ հայերենի մի շարք ուխտը գլխին խռով կենա, բարը գլուխը, գլխիդ փափախը բամին տանի եղանակավորող դարձվածքների: Իմաստային առումով դարձվածքների գլխավոր անդամը «գլուխ» բառն է: Շարահյուսական տեսակետից հայերենի և ռուսերենի դարձվածքների գլխավոր անդամը բայն է, ուստի և նշված դարձվածքները բայական են: Այդ առումով բազմազան են անգլերենի դարձվածքները, որոնցից մեկը բայական է՝ *Draw down anger (scorn) etc upon one's head*, մյուսը՝ գոյականական՝ *A hot head*, երրորդը՝ ածականական – մակբայական՝ *Like/as a bear with a sour head*:

Դարձվածքներից մի բանիսն ունեն իրենց համարժեքները այս կամ այն լեզվում՝

Գլուխը լվանալ – *Мыть голову.*

Գլխին թափել – *Посыпать голову.*


Աստծո անեծքը բերել մեկի գլխին – *Call down curses (from Heaven) upon sb/sb's head.*

Նշված դարձվածքները, իմաստային համարժեքներ լինելուց բացի, նաև բաղադրիչային համարժեքներ են:

Նախավերջին համարժեքների դեպքում ունենք նաև իմաստային նրբերանգ, այսպես հայերենի դարձվածքում արտահայտվում է մեկի վրա զայրանալու իմաստը, մինչդեռ անգլերենի դեպքում արտահայտում է իր գործողություններով կամ խոսքով մեկ ուրիշի զայրույթի շարժումը իր իսկ նկատմամբ:

Դաշտի մյուս դարձվածքները հատուկ են միայն այս կամ այն լեզվին:

Երեք լեզուներում էլ հանդիպում են դարձվածային տարբերակներ՝ քերականական՝ *լափը գլխին թափել* – *գլխին լափ թափել*, *բառային*՝ *գլխին կակալ*



ընկույզ (պոպոբ) կոտրել, ոճական՝ աշխարհի լափը մեկի գլխին թափել/ածել, բառային՝ draw down anger (scorn) etc upon one's head.

Ըստ իրենց արտահայտած իմաստի դաշտի՝ բոլոր դարձվածքները գտնվում են հոմանիշային հարաբերության մեջ: Հարկ է նշել, որ դիտարկված դարձվածքներից մի քանիսն ունեն նաև այլ իմաստներ, որոնցով դրանք տեղ են գրավում իմաստային այլ դաշտերում:

Այժմ բերենք սիրտ բաղադրիչով դարձվածքները:

Սիրտը շուռ անել/բերել/զալ/տալ – *Խիստ բարկանալ, ինքն իրենից դուրս գալ, սաստիկ տխրել*: *Չէ՛, հոգի ջա՛ն, դու սիրտդ շուռ մի տալ, անցկացած բաների վրա ես միտք էլ չեմ անում* (Պո., 126): – *Տիրուհի, ես զարմանում եմ, որ դու մի այդպիսի դատարկ բանի համար սիրտդ շուռ ես բերում* (Աղայան, 432):

Սիրտը նեղ – *Բարկացկոտ, նյարդային, սրտենդ*: *Մեր սիրտն ա նեղ, թե չէ աստծու սիրտը շատ լեն ա* (Պո., 247):

Սրտի դառնությունը թափել – *Բարկանալ, զայրանալ, բարկությունը, զայրույթը, վշտերն արտահայտել*: *Նա զգաց, որ այդ մարդը մի մեծ, շատ մեծ վերք ունի սրտում ու երևի առիթ է փնտրում՝ սրտի դառնությունը թափելու* (Ա. Խ., 255):

Սիրտը արյուն կտրել/արյունով լցվել – *Սաստիկ զայրանալ, դառնանալ, վշտանալ*: *Էլ ինչու երգեմ – այսպես օրերում Արնով լի լցված սիրտը, խեղճ սիրտը Մարում, հանգչում է ճնշված կրծքի տակ* (Խս., I, 163):

Սրտից արյուն գնալ/երթալ/կաթել – *Խիստ զայրանալ, կտոր-կտոր լինել*: *Նրանց սրտից արյուն էր կաթում*: *Նրանք տեսել էին իրենց ծնողների, արյունակիցների տանջալից մահը* (Ծ. Թորգ., 29): *Մեկը կարող էր լինել անտարբեր, Մյուսի սրտից արյուն էր կաթում, Երբ նա մոր դեմքին ցավ է նկատում* (Սեալ, I, 361):

Держать сердце (ժդվրդ.) – *Բարկանալ, չարանալ*:

В сердцах – *Ինչ-որ բան անել զայրույթի պոռթկման ժամանակ* – *Ничего! – в сердцах отвечал Заметов, – всё вздор!* (Прест. и наказ., 154). *Старик в сердцах щипая свою бородку* (Как зак. Сталь, 165).

Вводить в сердце, – *Մեկին զայրացնել*:

С сердцем (ժդվրդ.) – *Բարկացած, զայրացած*: *Она капризно оборвала свою речь и с сердцем ушла в работу* (Поединоч, 91): – *Полное поясничать!* – *воскликнул с сердцем Николай Артемьевич* (Накануне, 351).

Հետաքրքիր է, որ այս դարձվածքի մյուս իմաստը «բարի» է և այն գտնվում է «բարություն» իմաստային դաշտում: *Я теперь желаю, с моей стороны доказать, что и я человек с сердцем и совестью* (Прест. и наказ., 431)).

Накипело на сердце – *Մեկը բարկացած է*:

Срывать сердце/сорвать сердце – *Չայրույթը թափել մեկի վրա*: *Надо было ему на ком –нибудь сорвать своё сердце!* (Вешние воды, 105). *Как часто бывало, я ходил взад и вперед по комнате с бессознательным желанием, чтоб поскорей меня кто –нибудь обидел или сказал слово, которое бы можно было принять за обиду, и поскорей сорвать на чём –нибудь сердце* (Униж и оск., 380).

Иметь сердце – Բարկանալ:

Վերջին դարձվածքն ունի իր բաղադրիչային համարժեքները հայերենում՝ **սիրտ ունենալ** և անգլերենում՝ **have a heart** (բառացի՝ սիրտ ունենալ), սակայն հարկ է նշել, որ իմաստային առումով սրանք համարժեքներ չեն, քանի որ տարբեր լեզուներում ունեն տարբեր իմաստներ: Այսպես, եթե ռուսերենի դարձվածքը նշանակում է «բարկանալ», ապա հայերենի դարձվածքն արտահայտում է «մի բան անելու ցանկություն, տրամադրություն ունենալու», իսկ անգլերենի դարձվածքը՝ «բարության» իմաստները: Հետևաբար և դրանք դիտարկվում են իմաստային տարբեր դաշտերում: Այս իմաստային դաշտի դարձվածքներից մի քանիսն արտահայտում են նաև տխրության, վշտի ու դառնության նրբիմաստները:

Թե՛ հայերենի, թե՛ ռուսերենի բոլոր դարձվածքները բայական երկանդամ և եռանդամ կառույցներ են, բացառությամբ ռուսերենի երկու դարձվածքի՝ (**в сердце** և **с сердцем**), որ մակբայական միագագաթ կառույցներ են: Դարձվածքների գլխավոր անդամը շարահյուսական տեսակետից դարձվածքների բայ բաղադրիչն է՝ խոնարհված կամ չխոնարհված ձևով:

Իմաստային առումով բոլոր դարձվածքների գլխավոր անդամը **սիրտ** բաղադրիչն է: Ըստ իրենց ընդհանուր իմաստի դաշտի հայերեն և ռուսերեն դարձվածքները համարժեք են, սակայն հարկ է նշել, որ յուրաքանչյուր դաշտի դարձվածքներն ազգային բնույթ ունեն, արտահայտում են իրենց կրող ժողովրդի մտածողությունը:

Դաշտում նկատվում են դարձվածային մի շարք տարբերակներ՝

Սիրտը շուռ անել/բերել/գալ/տալ (բառային և քերականական),

Սրտից արյուն գնալ/երթալ/կաթել (բառային, ոճական),

Срывать/сорвать сердце (քերականական):

Այստեղ ևս, ինչպես նախորդ դաշտում, յուրաքանչյուր լեզվի դարձվածքները հոմանիշներ են:

Ահա **աչք** բաղադրիչով դարձվածքները

Աչքերը արյունով լի/արյունամած/ար(յուն)ակալած/ – Ձայրույթից աչքերը արյուն լցված, գայրացած, բարկացած, գազազած: *Կես ժամ չէր անցել, որ Սաքոն սրտատրոփ, մեռելի գույն առած, աչքերն արենկալած, շփոթության մեջ՝ կրկին ընկավ մոլորվի մոտ* (Պո., 217):

Աչք(եր)ը արյուն կոխել/լցվել – Ձայրույթից աչքերն արյուն լցվել, գայրանալ, կատաղել:– *Աչքերս արյուն են կոխում, ուզում եմ հետ դառնալ, լրբերի գլուխները ջարդել* (Շիրվ., 528):

Աչքերից արյուն թափել/կաթել – Կատաղած լինել, վրեժը լուծելու եղեռն գործելու տրամադիր լինել:

Աչքերը կրակ թափել/ցայտել/կտրել – Բարկություն, գայրույթ արտահայտել: *Հոպոպի աչքերը կրակ կտրվեցին* (Նար–Ղոս, 63): *Նրա գեղանի աչքերը կրակ էին թափում* (Սուր., 273):

Աչքերից կայծեր դուրս թռչել. դուրս թափվել/ցայտել – Խիստ գայրանալ, մոլեգնել, կատաղել:

Աչքերը կայծ/կայծակին տալ – Տես՝ **Աչքերից կայծեր դուրս թռչել**: *Այն րոպեից նրա աչքերը կայծակին տվին*: (Պո., 369):

Աչքերը ոլորել – խեթ-խեթ նայել՝ դժգոհություն արտահայտելով: *Ձաքին աչքերը նրա վրա այնպես ոլորեց, որ խեղճի լեղին ցամաքեց* (Բակ., 42):– *Դու համբերիր, ընկեր Քարամյան,– սաստեց Սաշուրյանը ու աչքերը ոլորեց նրա վրա* (Ս. Խ., 121):

Աչքերը շուռ/շուռ ու մուռ գալ/տալ/ածել – Աչքերի շարժումով գայրույթը, դժգոհությունը հայտնել: *Շուռ են գալիս իրենց բնում Չարչու աչքերն ըսպառնալի* (Թում., II, 182): *Նա տհաճությամբ աչքերը շրջեց Ներսիկի վրա: (Դեմ., 225):*

Աչքը գոցել, բերանը բանալ (ժղվրդ.) – Հայիոյել առանց որևէ բանից ակնածելու:

Աչքը կոխել/խոթել/ծխտել/մտցնել/դնել – 1. Մի բան մեկին դեմ անելով ցույց տալով ասելով հանդիմանել, երեսվոր տալ: 2. Դժգոհությամբ (անարգական ձևով) մի բան մեկին տալ: – *Հետո՞ ինչ,– որը մարմնով ընդոտտ շրջվեց Վախթանգը Ֆրավաշիին,– նա իր լավությունը աչքս է կոխում* (Դեմ., 678):– *Հը՛, բռնե՛, աճկո՛ դի, կնգատ համա իմքին կունենաս առնելու* (Սունդ., 280):

Աչքը կարել (մեկի) – Հանդիմանական՝ անծքի արտահայտություն, մեկին դժբախտություն (կուրություն) ցանկանալ:– *Հա, հա, ծեր աչքն էլ կարեմ, էս ա, տալիս եմ,– փնթփնթաց պառավը* (Նար–Դոս, 84): *Մարդու աճկն էլ կարիմ, նրանք խճպտանք ունին, հոգի ունին* (Սունդ., 287):

Աչքիցս կորի՛ր/կորեթ/չքվիր – Հանդիմանական/սպառնական արտահայտություն մեկին վնդդելու համար:– *Կորե՛ք ամենքդ էլ իմ աչքից, անպիտաններ,– բարկացավ մոկրովը,– ծեզ էս մարդատեղ եմ դնում, բան ասում, դուք էլ նա եք անում* (Պո., 267): *Կորիր իմ աչքից, և թող գետինը ծեզ ծածկե իր տակ* (Թարգ., Շեքսպ., 291):

Колоть глаза/глаз – 1. Կշտամբել, ամոթանք տալ: 2. Բարկացնել, տհաճություն պատճառել:– *Не знаю, как истина, а правда, видно, глаза колет, пробормотал Пугачов и с сердцем отошел в сторону* (Рудин, 41).– *Нет, не все: дайте честное слово, что вы предадите вечному забвению мои глупости и перестанете колоть мне ими глаза.* (Гонч., 308).

Сверкать глазами – Աչքերը փայլել, հայացքով գայրույթ, հուզմունք արտահայտել: *Госпади!– закричала вдруг она, засверкав глазами,– неужели ж нет справедливости!* (Прецт. и наказ., 387). *А ты не смей под руку говорить!– крикнул он,– сверкая черными глазами* (Поединнок, 188).

С глаз долой – 1. Աչքիցս հեռու կաց, կորիր աչքիցս, այնպես, որ չերևաս: 2. Դու՛րս կորիր, չքվիր: *Однако видела ее за скотника и сослала с глаз долой* (Двор. гн., 108).

Как бельмо в глазу – Իր ներկայությամբ բարկացնող մի բան: **Быть бельмо в глазу.**

Тыкать в глаза (ժղվրդ.) – Աշտապես հիշեցնել ինչ–որ բանի մասին, կշտամբել:

One's eyes flash/shoot fite (բառացի՝ մեկի աչքերը փայլում են) – Նրա աչքերը այրվում են, փայլում են բարկությունից, հուզմունքից և այլն:

Give sb. the beady/the fishy eye (ամեր. ժարգ.) (բառացի մեկին տալ խեթ/ծկան աչք) – Դժգոհությամբ նայել մեկին:

Damn your eyes (խսկց. գոհկ.) (բառացի՝ անհոգի ծեր աչքերը) – Անհոգիք դուք:

Ինչպես նկատում ենք, բերված դարձվածքները պատկանում են կառուցվածքային տարբեր տիպերի: Հայերենում գերակշռում են բայական երկանդամ, եռանդամ և քառանդամ կառույցները՝ **աչքերը ուլորել, աչքերը կրակ թափել, աչքերը գոցել, բերանը բանալ և այլն**, թեև հանդիպում են նաև մակբայական աչքը արյուն, աչքերը արյունով լի և հաղորդակցական **աչքիցս չքվի՛ր, աչքիցս կորի՛ր** դարձվածքներ:

Դարձվածքներից երկուսն իրենց կազմում ունեն հարադրություններ՝ **աչք–ուներից կրակ ցայտել, աչքերը շուռ ու մուռ տալ/գալ**:

Ռուսերենում նկատելի են բայական, հաղորդակցական և ածականական դարձվածքներ:

Դարձվածքների մեջ սակավաթիվ են այն կապակցությունները, որոնք դաշտում տեղ են գտել իրենց մեկից ավելի իմաստներով: Բազմաթիվ են դարձվածային տարբերակները.

Աչքերով կայծակել/կրակել (բառային),

Աչքերից արյուն թափվել/կաթել (բառային),

Աչքերը փայլել/փայլատակել (բառային),

Աչքը կոխել/խոթել, ճխտել (բառային, ոճական),

Աչքիցս կորի՛ր/կորեք (բերականական),

Колоть глаза/глаз (բերականական),

On's eyes flash/shoot fire (բառային) և այլն:

Յուրաքանչյուր լեզվի դարձվածքները կարելի է դիտել որպես հոմանիշներ: Երեք լեզուների դարձվածքների շարքում նկատվում են նաև դարձվածային համարժեքներ, որ արդյունք են, կարծում ենք, երեք ժողովուրդների արտաքին դիտարկումների հիման վրա կատարած մտավոր վերացարկումների:

Աչքիցս կորի՛ր/կորեք – С глаз долой,

Աչքերը կրակ թափել/ցայտել – Сверхать глазами – One's eyes flash/shoot fire,

Աչքերը ուլորել – Give sb. the beady/the fishy eye,

Աչքը կոխել/խոթել/ճխտել – Тыкать в глаза.

Հայերենի և անգլերենի դարձվածքների շարքում առկա են նաև անեծքի արտահայտություններ՝

Աչքը կարել – Damn your eyes.

Չայրույթ, հանդիմանություն, դժգոհություն արտահայտող դարձվածքների իմաստային դաշտում տեղ են գտել նաև մի շարք այլ հայերեն դարձվածքներ՝ **գլխին բաղանիք սարքել** (մեկին խիստ նախատել, զայրանալ մեկի վրա), **գլուխը լվանալ/լվալ** (խիստ հանդիմանել, նախատել, շշպռել), **գլխին կարկուտ թափել, գլխին կակալ/պոպոք/ընկույզ կոտրել** (սաստիկ նախատել, կշտամբել), **գլխին/գլխիս ծյուն գալ** (հանդիմանություն հիմար անխելք, միամիտ նշանակությամբ), **գլխին շուռ տալ բարկությունը** (զայրույթը մեկի վրա թափել), **գլուխը թափահարել** (հանդիմանել, համաձայն չլինել, չընդունել), **գլխին կրակ թափել/վառել, գլխին հուր ու կայծակ թափել** (խիստ զայրանալ, մոլեգնել), **գլխին կոտրել** (զայրույթը մեկի վրա թափել), **գլխի**

դափաղը/կափարիչը ժած գալ, գլուխը տաքանալ (սաստիկ զայրանալ), սրտին յուղ լցնել (բորբոքել, գրգռել), սրտախաղ լինել (բարկանալ, սիրտը ելնել), սրտագոլալը մի կենալ (սաստիկ բարկանալ), աչքերով կայծակել/կրակել, աչքերից կրակ թափվել/ժայթքել/դուրս գալ (խիստ զայրանալ, կատաղել), աչքը արուն (բարկացած, կատաղած), աչքերը կայծակներ արծակել/թափել, աչքերը չոել, աչքերը փայլել/փայլատակել, աչքը դառնալ, արունը աչքն առնել, աչք-ունքից կրակ ցայտել (խիստ զայրանալ), աչքերը խուղորտել (խիստ զայրանալ) և այլն:

Դիտարկված երեք դաշտերի դարձվածքներում գործում են անվանական և բայական քերականական կարգեր առկայացման, հոլովի, թվի, դեմքի, եղանակի, ժամանակի, սեռի, հաստատական-ժխտականի: Հիշյալ կարգերից մի քանիսն օժտված են իմաստազատիչ դերով, այսինքն՝ այլ կարգերով գործածվելիս դարձվածքները կկորցնեն իրենց դարձվածային, երբեմն նույնիսկ իմաստն ընդհանրապես, մյուս կարգերը զուրկ են մշված դերից:

Եթե իմաստային առումով դարձվածքների գլխավոր անդամներն, ինչպես արդեն մշել ենք *գլուխ*, *սիրտ* և *աչք* բաղադրիչներն են, ապա շարահյուսության տեսակետից գլխավոր անդամները տարբերվում են ըստ կառուցվածքային տիպերի: Յուրաքանչյուր լեզվի դարձվածքների բաղադրիչների միջև շարահյուսական կապերն արտահայտվում են ըստ ուսումնասիրվող լեզուների տիպաբանական առանձնահատկությունների:

Դաշտի դարձվածքների ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ իրենց արտահայտած ընդհանուր իմաստի հետ մեկտեղ դրանք արտահայտում են իմաստային մի շարք նրբերանգներ, այսպես՝ հայերենում և ռուսերենում առկա է նաև հայիոյելու, ռուսերենում ատելության նրբիմաստները: Ավելի բազմազան են նրբիմաստները հայերենում:

Ընդ որում՝ հարկ է մշել, որ այդ նրբիմաստները հաճախ տարբերվում են *գլուխ*, *սիրտ* և *աչք* բաղադրիչներով դարձվածքների դեպքում: Օրինակ *գլուխ* բառով կազմվածներն արտահայտում են նաև անտարբերության ու պատժի, *սիրտ* բաղադրիչով՝ սրտնեղության, դառնության, վշտանալու, *աչք* բաղադրիչով՝ վրեժի և դժգոհության իմաստային նրբերանգները: Անգլերենում նկատվում է նաև աստժո բարկությունը մեկի վրա բերելու նրբիմաստը, իսկ զայրանալու և զայրացնելու նրբիմաստներն առկա են բոլոր երեք լեզուներում: Վերջիններս, կարծում ենք, դարձվածքների բաղադրիչների սեռիմաստային առանձնահատկությունների արդյունք է:

Ուսումնասիրված դարձվածքներն ունեն ոճական տարբեր կիրառություններ: Նրանք հիմնականում օգտագործվում են ժողովրդախոսակցական լեզվում, բարբառներում, մամուլում: Նրանցով բավականին հարուստ է գեղարվեստական գրականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, ԳԱ հրատ., Երևան, 1969-1980:
2. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևանի համալս. հրատ., 1975:
3. Англо-русский фразеологический словарь (составил А.В. Кунин), т. 1-2, изд. "Совет. энциклопедия", М., 1967.
4. Большой англо-русский словарь под редакцией И.Р. Гальперина, т. 1-2, изд. "Русский язык", М. 1977.
5. Фразеологический словарь русского языка, под ред. А.И. Молоткова, (около 4000 фр.), "Русский язык", М., 1978.
6. Brewer's Dictionary of Phrase and Fable. London, 1956.
7. The Old English Dictionary, vol. 1-12, Oxford University Press, 1961.
8. Oxford Advanced Learner's Dictionary of Current English, by A.S. Hornby, Oxford University Press, 1980.
9. Աղայան Ղ., Երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1979:
10. Դեմիրճյան Դ., Վարդանանք, «Լույս», Երևան, 1987:
11. Թոթովենց Վ., Երկեր 3 գրքով, գիրք I, Սովետական գրող, Երևան, 1988:
12. Թումանյան Զովհ., Երկերի լիակատար ժողովածու, հհ. 1-10, Հայաստանի ԳԱ հրատ., Երևան 1990-1996:
13. Խսահակյան Ա., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. I, «Հայաստան» հրատ., Երևան, 1973-1979:
14. Խանգաղյան Ս., Հողը, Երևան, 1954:
15. Սուրացան, Գևորգ Սարգսյետունի, Հայպետհրատ, Երևան, 1957:
16. Շեքսպիր Վ., Երկեր, ԵՊՀ հրատ., Երևան, 1991:
17. Պոռոշյան Պ., Հացի խնդիր, «Հայաստան» հրատ., Երևան 1968:
18. Սունդուկյան Գ., Երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1984:
19. Սևակ Պ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. I, «Հայաստան» հրատ., Երևան 1972:
20. Րաֆֆի, Երկերի ժողովածու, 10 հատորով, հ. IV, Սովետական գրող, Երևան, 1984:
21. Гончаров И. А., Обыкновенная история, изд. "Худ. лит." М., 1968.
22. Достоевский Ф. М., Полное собрание сочинений в 30-и томах, т. 1, Изд. "Наука", Л., 1972.
23. Достоевский Ф. М., Идиот, Изд. "Правда", М., 1981.
24. Куприн А. И., Сочинения в 2-х томах, том I, Худ. лит., Москва, 1981.
25. Островский Н., Как закалялась сталь, изд. Лен. ун-та, Л., 1977.
26. Пушкин А. С., Классики и современники, Худ. лит., Москва, 1982.
27. Тургенев И.С., Дворянское гнездо, "Гос. изд. худ. лит.", М., 1952.
28. Тургенев И.С., Собрание сочинений в 12-и томах, т. 5, 7, 8, "Худ. лит.", М., 1977-1978.
29. Galsworthy J., The man of Property, "Progr. Publ.", М.

НЕКОТОРЫЕ ЗАМЕЧАНИЯ О СЕМАНТИЧЕСКОМ ПОЛЕ ФРАЗЕОЛОГИЗМОВ С КОМПОНЕНТАМИ "ГОЛОВА", "СЕРДЦЕ" И "ГЛАЗ", ВЫРАЖАЮЩИХ РАЗДРАЖЕНИЕ, НЕДОВОЛЬСТВО, УПРЕК

С давних времен сердце осознавалось как центр эмоций. Но почему? Ведь эмоции в действительности централизованы в мозге, но когда у нас возникают сильные чувства — чувства страха, гнева, горя, любви и т.д., адреналин рвется в кровь, повышая артериальное давление и ускоряя работу сердца. Таким образом, сердце всегда было для людей центром мысли и чувств, т.е. сердце контролирует все чувства, чувства которые отражаются в глазах человека. Ведь посмотрев человеку в глаза, можно понять, что творится у него на душе — рад он или печален, раздражен ли, стыдится ли, полон надежды или разочарован, любит ли или ненавидит, безразличен, испуган или, может быть, страдает от боли или горя. Глаза выдают, правду ли человек говорит или лжет, искренен или льстит и т.д.

В армянском, русском и английском языках есть множество фразеологизмов, выражающих раздражение, недовольство, упрек. Это естественно — ведь все народы, говорящие на указанных языках могли, основываясь на внешних наблюдениях, понять внутренний мир человека, его чувства, сделать умозаключения и абстракции. Эти абстракции и являются истоком формирования вышеуказанных фразеологизмов, изучению семантических, грамматических и структурных характеристик которых посвящена эта статья.

H. Ghazaryan

THE SEMANTIC FIELD OF THE PHRASEOLOGICAL UNITS WITH THE COMPONENTS "HEAD", "HEART" AND "EYE" EXPRESSING IRRITATION, DISSATISFACTION AND REPROACH

Since ancient times heart has been realized as a centre of emotions. But why? Emotions are centered in the brain in the reality, aren't they? But when we experience intensive feelings that of fear, irritation, grief, love, etc., adrenaline rushes into our blood thus increasing the blood pressure and accelerating the work of the heart. So the heart has always been the centre of thought and emotions, that is it controls all the emotions. These emotions are reflected in a person's eyes. Looking into the eyes of a man, one can understand what is going on in his soul, whether he is happy or unhappy, irritated or ashamed, hopeful or hopeless, whether he loves or hates, or whether he is indifferent, frightened or suffering from some pain or grief. Eyes show whether a man is telling the truth or a lie, whether he is sincere or flattering, etc.

Numerous phraseological units expressing "irritation, dissatisfaction and reproach" can be found in Armenian, Russian and English. This is natural. All the nations speaking the mentioned languages could, based on their external observations, understand the inner world of a man and his feelings, reason and make abstractions. These abstractions are the source of formation of the phraseological units. The goal of this article is to study, analyse and compare the semantic, structural and grammatical characteristics of the mentioned linguistic units.